ԱՐՄԱՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ԱՐՓԻՆԵ ՍԻՄՈՆՅԱՆ
Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան

ՆՈՐԱՀԱՅՏ ՊԱՏԱՌԻԿՆԵՐ ՄԵՂՐԻԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՂՈՒՄՆԵՐԻՑ

Բանալի բառեր՝ *Մեղրի, Ս. Հովհաննես վանք, գաղտնարան, պեղումներ, սրբապատկեր, տպագիր գիրք, ձեռագիր, պատառիկ:*

Ս. Հովհաննես եկեղեցին, որ ժողովրդին հայտնի է նաև Անապատանաց վանք անվամբ, գտնվում է ներկայիս Մեղրի քաղաքի հյուսիսարևմտյան հատվածում: Եկեղեցին կանգուն է, իսկ գավիթ-նախասրահը և տնտեսական զանազան սենյակները մինչև հիմքերն ավերված են (նկ. 1): Եկեղեցին եռանավ բազիլիկ հորինվածքով գմբեթավոր դահլիճ է, որը գրեթե ամբողջությամբ շարված է անմշակ գրանիտե քարերով, իսկ գմբեթը՝ աղյուսաշեն է: Այն ուշմիջնադարյան Սյունիքի երեք գմբեթավոր եկեղեցիներից մեկն է[1]: Եկեղեցու սրահն ունի XVIII դարի որմնանկարներ, իսկ արտաքին հարդարանքից մնացել է միայն հարավային պատի մեջ ագուցված խոյի գլխաքանդակը: Արևմտյան ճակատը ժամանակին զարդարված է եղել խաչքարերով, որոնք հետագայում ընկել են, և այժմ մնացել են միայն դրանց համար նախատեսված խորշերը[2]:

Եկեղեցու մասին աղբյուրները խիստ սակավաթիվ են: Այն առաջին անգամ հիշատակում է Ստեփանոս Օրբելյանը՝ Սյունիքի խոշոր վանքերի ու անապատների շարքում[3]: Զարգացած միջնադարում լայն գործունեություն ծավալող՝ բավական մեծ եկեղեցի է եղել, ինչը հաստատվում է պեղումների արդյունքներով: Ավելի ուշ,

---

1 **Մ. Հասրաթյան,** *Սյունիքի XVII-XVIII դարերի ճարտարապետական համալիրները*, Երևան, 1973, էջ 83, **Մ. Հասրաթյան**, *Մեղրու շրջանի հուշարձանները*, Երևան, 1987, էջ 9:

2 XVI դարի այս արձանագիր խաչքարերի մասին Ա. Նալբանդյանի՝ «Երեք արձանագիր խաչքարեր Մեղրիի Սբ. Հովհաննես (Անապատանաց) եկեղեցուց» վերնագրով հոդվածը լույս կտեսնի առաջիկայում:

3 **Ստեփանոս Օրբելեան,** *Պատմութիւն նահանգին Սիսական*, Թիֆլիս, 1910, էջ 499-500:

Մեղրու եկեղեցուն անդրադառնում են XVIII դարի հեղինակ Աբրահամ կաթողիկոս Կրետացին[4]*, և մի վերջին անգամ՝ Ղևոնդ Ալիշանը*[5]*, որոնց տված խիստ հակիրճ տեղեկություններից կարելի է հասկանալ, որ եկեղեցին այլևս չուներ իր նախկին հռչակն ու հզորությունը:*

2016 և 2018 թթ. Մեղրիի Ս. Հովհաննես եկեղեցում՝ վերականգնման ծրագրի շրջանակներում պեղումներ իրականացրեց ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը՝ նպատակ ունենալով բացել եկեղեցու և մյուս կառույցների հիմքերը, ուսումնասիրել հնագիտական շերտերը[6]*: Պեղումները բավական արդյունավետ էին. բացի նրանից, որ բացվեցին կառույցների հիմքերը և հնագիտական արժեքներով հարուստ մշակութային շերտեր, հայտնաբերվեցին ջնարակված խեցեղենի բազմաթիվ բեկորներ և ամբողջապես հավաքվող անոթներ, արձանագիր խաչքարեր և տապանաքարեր, մետաղական սպասքի և ջահերի մասերի մեծ հավաքածու, բազմաթիվ այլ առարկաներ, որոնք ոչ միայն տվեցին եկեղեցու գործունեության ժամանակափուլերի ամբողջական պատկերը, այլև միջնադարյան Սյունիքի ուսումնասիրման համար նոր հեռանկարներ ապահովեցին:*

Բացի եկեղեցու շուրջը կատարվող պեղումներից, ուսումնասիրություններ արվեցին նաև եկեղեցու ներսում, որտեղ հատկապես առաջնային էին հարավային ավանդատան տակ գտնվող գաղտնարանի պեղումները (նկ. 2): Տարիներ առաջ այն ավերվել է. ավանդատան հատակին անցք է բացվել, որի քարերը լցվել էին ստորգետնյա գաղտնարանի մեջ:

Այս գետնափոր գաղտնարան-թաքստոցի ուսումնասիրման աշխատանքները կարևոր էին այն առումներով, որ նախ պետք էր պարզել դրա նշանակությունը (ըստ վարկածի՝ այն կարող էր լինել դամբարան), և երկրորդ՝ այս տարածքը նույնպես պետք էր նախապատրաստել վերականգնման: Դա թաղակապ ցածրիկ առաստաղով (կենտրոնական մասում 1,95 մ բարձրությամբ) և ուղղանկյուն հատակագծով (լայնք՝ 2,30 մ, երկ.՝ 2,48 մ) յուրօրինակ թաքստոց է, ինչպիսիք ունեն Մեղրիի տարածաշրջանի մի քանի այլ եկեղեցիներ, ինչպես օրինակ՝ Վահրավարի եկեղեցին, որի գաղտնարանը խորանի տակ է[7]*: Պեղումների արդյունքում բացվեց անհարթ մայր ապարը, որը հնարավորինս հավասարեցնելու համար տեղ-տեղ կավահողային լիցք է արվել: Արևմտյան կողմում խոշոր և թերամշակ սալաքարերով շարված մուտքն է: Դրանից սկսվում է նեղլիկ և անհարմար միջանցք, որն էլ դուրս է*

---

4 **Աբրահամ Կրետացի,** *Պատմություն*, Երևան, 1973, էջ 155:

5 **Ղ. Ալիշան**, *Սիսական*, Վենետիկ, 1893, էջ 303:

6 Պեղումներն արվել են «Երկիր և մշակույթ» բարեգործական կազմակերպության նախաձեռնությամբ (նախագահ՝ Գ. Գևոնյան, ճարտարապետ՝ Ս. Նալբանդյան), որը նպատակ ունի ամբողջությամբ վերականգնել եկեղեցին և բարեկարգել տարածքը:

7 **Մ. Հասրաթյան,** Մեղրու շրջանի հուշարձանները, էջ 15:

գալիս ավանդատուն տանող աստիճանահարթակից և ծածկված է սալաքարով: Այդ ծածկասալը ավելի ուշ ամրացվել և փակվել է կրաշաղախով:

Ներքնահարկում կուտակված հողի ուսումնասիրման և հեռացման աշխատանքների ժամանակ ի հայտ եկան մեծ թվով գտածոներ, ինչը ևս մեկ անգամ հաստատեց դրա գաղտնարան լինելու տեսակետը: Գտածոները մեծ մասամբ խիստ վնասված են, սակայն ակնհայտ է, որ դրանք ժամանակին ի պահ են տրվել այս փոքր խցում: Հատակի բացման համար պեղվող ստորին շերտի մեջ գտածոների քանակը աստիճանաբար ավելացավ: Դրանց մեջ միջնադարյան մշակույթի ամենաբազմազան իրեր են, որոնք հիանալի կերպով արտահայտում են Մեղրիի Ս. Հովհաննես եկեղեցու գործունեության ժամանակաշրջանները: Այստեղից հայտնաբերվեցին մետաղական, կավե, քարե, փայտե և այլ նյութերից պատրաստված զանազան առարկաներ՝ եկեղեցական ծիսակարգերի առաջնային պարագաներ:

Հայտնաբերվեցին խոշոր կարասների, կավե փողրակի, խփի բեկորներ, ձիթաճրագի հատակամաս, ապակյա պնակի բեկորներ, ջնարակված խեցատ, տրեխներ և այլն: Ուշագրավ էին կրաքարային սպիտակ ապարից (կալցիտ) տապանաքարի բեկորները, որոնցից երեքի վրա պահպանվել են արձանագրության հատվածներ, ավազաքարից խաչքարի արձանագիր բեկորը և խաչքարային հորինվածքով կրաքարե սալիկը: Չենք բացառում, որ վերջինս կարող է լինել որևէ իր (մասունք) կամ մատյան պահելու տուփի կափարիչ, ինչպիսին ժամանակին հայտնաբերվել է Քարվաճառից[8]: Քիչ չէին նաև մետաղական առարկաները՝ հիմնականում պղնձից և արույրից պատրաստված աշտանակների, ջահերի, մոմակալների մասեր, ինչպես նաև արկղի փական:

Գտածոներից հատկապես առանձնանում է մոտ 32,5 սմ բարձրությամբ և 26 սմ լայնքով կտավի հատվածը, որի վրա պահպանված պատկերների քննությունը ցույց է տալիս, որ այն իսկզբանե շատ ավելի մեծ է եղել (նկ. 3)[9]: Կարմիրի և ոսկու ներդաշնակությամբ և բարձր վարպետությամբ արված նկարը սև միջնապատով բաժանվում է երկու մասի: Աջ կողմում կարմիր զգեստի հատված է՝ շրջազգեստ է կամ վարագույր, որը բավական շարժուն է պատկերված: Զգեստի կարմրի վրա կան երեք մանուշակների պատկերներ: Այս զգեստն իր ձևով համեմատելի է Ս. Հովհաննես եկեղեցու որմնանկարներում եղած հրեշտակների զգեստներին, որոնք նույնպես կարմիր երանգներով են և ալիքաձև: Բացի այդ,

---

8 **Հ. Պետրոսյան,** *Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը,* Երևան, 2008, էջ 104-105:

9 Շնորհակալությամբ հայտնում ենք, որ կտավը մաքրել և վերականգնել է Մաշտոցյան Մատենադարանի վերականգնման բաժնի վարիչ Գայանե Էլիազյանը:

զգեստի վրա նկատելի է ուղղահայաց սև գիծ՝ ինչ-որ առարկայի ձողաձև կոթ: Ձողի առկայությունը և սպիտակ ամպերի տեսարանով հենքը ենթադրել են տալիս, որ գործ ունենք հրեշտակի պատկերի հետ, ավելի հստակ՝ Միքայել հրեշտակապետի, որը սովորաբար պատկերվում է կշեռքի նժարները ձեռքին կամ տեգով:

Ձախ հատվածում, հավանորեն, եղել է երկու անձի պատկեր, որոնց դիրքը չի համապատասխանում աջակողմյան ենթադրյալ հրեշտակի պատկերին և հասկանալի է, որ պատկերների շարքն ունեցել է դարձդարձիկ (զիգզագաձև) դասավորություն: Վերևում արված պատկերից պահպանվել է միայն կարմիր զգեստի մի փոքր հատված, որը ստորին մասում գտնվող պատկերից առանձնանում է սպիտակ կիսաստղով և շագանակագույն միջնազարդով, որի կենտրոնում վարդագույն ծաղիկ է: Առավել հետաքրքիր և խոսուն է ստորին հատվածում պահպանված պատկերը. այն սրբի դեմքի հատված է՝ արված կապույտ հենքի վրա: Ոսկեգույն լուսապսակը երիզված է կարմրավուն եզրագոտիով: Հայացքն ուղղված է դեպի աջ: Պահպանվել են լայն ճակատը, սև հոնքերը, քթի վերին հատվածը, շեկ մազերը, սպիտակ մորուսից մի հատված և աջ ուսը՝ կանաչավուն զգեստով: Հատկապես արտահայտիչ են շագանակագույն աչքերը, որոնք դեմքին հաղորդում են խոհեմություն, բարություն, ինչպես նաև հուզմունք: Դեմքի դիմաց պահպանվել է արձանագրություն «մա-ս»: Ցավոք, երրորդ տառը պատռվածքի պատճառով եղծվել է, ինչը խանգարում է այն լիարժեք կարդալուն: Հավանականությունը մեծ է, որ գրված է Մարկոս կամ Մատթեոս ավետարանիչներից մեկի անունը: Նման դեպքերում «Սուրբ» բառը սովորաբար գրվում է գլխի ձախ կողմում, իսկ անունը՝ աջ: Մեղրի քաղաքի մյուս երկու եկեղեցիների որմնանկարներում (Մեծ Թաղի Ս. Աստվածածին և Փոքր Թաղի Ս. Հովհաննես Մկրտիչ) պահպանված ավետարանիչների պատկերների համեմատական վերլուծությունը թույլ է տալիս ենթադրել, որ այստեղ պատկերված է ս. Մարկոսը (դրանցում Մարկոսը սպիտակամորուս է, Մատթէոս և Ղուկաս ավետարանիչները սև մորուսներով են, իսկ Հովհաննես ավետարանիչը՝ անմորուս): Հստակ է նաև, որ այս պատկերի հեղինակը չի կարող լինել հեղինակը Ս. Հովհաննես եկեղեցու որմնանկարների, որոնք շատ պարզ են և ոճով ու գույներով չեն համապատասխանում կտավի պատկերին, նաև ժամանակագրորեն ավելի վաղ են: Սրբապատկերն իր զուգահեռներն ունի հատկապես Մեծ Թաղի Ս. Աստվածածին եկեղեցու որմնանկարներից ս. Մարկոսի պատկերի հետ, որի կապույտ ետնագույնը, լուսապսակի գույները, հայացքի ուղղությունը, աչքերը և սպիտակ մորուսը շատ նման են կտավի պատկերին, և չենք բացառում, որ նույն նկարչի ձեռքի գործն են: Երկու աշխատանքների գրիչների ձեռագրերը և տառաձևերը

նույնպես բավական նման են։ Ս. Աստվածածին եկեղեցու որմնանկարների հեղինակի անունը և կատարված աշխատանքների թվականը հայտնի է՝ Մանուկ Ստեփանոս, 1848 թ.։

Գտածոների շարքում բավական ուշագրավ է մատենագրական նյութը, մասնավորապես՝ ձեռագիր և հնատիպ գրքերի պատառիկները։ Այստեղ հարկ ենք համարում ներկայացնել Մատենադարանում պահվող պատառիկների մասին ընդհանուր տեղեկություններ։

Ձեռագրերի և հին տպագիր գրքերի հետ առնչվող ամեն ոք ժամանակ առ ժամանակ գործ է ունենում վաղ թվագրվող ձեռագիր պատառիկների հետ, որոնք հաճախ օգտագործված են նաև որպես կազմի առանձին մասեր։ «Պատառիկ» հասկացության տարբեր դրսևորումներ կան. ներկայումս այն առավելապես բնորոշում է մեզ հասած ձեռագրերի, նաև հնատիպ գրքերի առանձին մասերը։ Հայտնի է, որ թե՛ քանակով և թե՛ որակով Մաշտոցյան Մատենադարանի հայերեն ձեռագրերի երկրորդ հավաքածուն պատառիկներն են՝ ընդհանուր հաշվով 2239 միավոր։ Պատառիկների այս հարուստ հավաքածուն հիմնականում գոյացել է 1915-1916 թթ.՝ Վասպուրականից և Տարոնից բերված ձեռագրական հատակտորներից, ինչպես նաև 1930-1936 թթ.՝ Ախալցխայից և Հայաստանի տարբեր շրջաններից գիտական արշավախմբերի հավաքած համապատասխան նյութերի հիման վրա։ Մի քանի հարյուր պատառիկ գնվել կամ նվեր են ստացվել տարբեր անհատներից, իսկ բազմաթիվ պատառիկներ հանվել են Մատենադարանի ձեռագրերից, որոնց պահպանակներն են եղել[10]։ Վերջին տարիներին Մաշտոցյան Մատենադարանում սկսվել է նաև այս մեծարժեք հավաքածուի նկարագրման աշխատանքը[11]։ Պատառիկների զգալի մասը, ինչպես վերը նշվեց, նախկին պատառիկ-պահպանակներ են, որոնք իրենց ընկալ-ամբողջական ձեռագրերից անջատվել են հիմնականում նախորդ դարի սկզբներին։

Այժմ անդրադառնանք պեղումների ընթացքում հայտնաբերված հնատիպ պատառիկներին։

XVI դարում հայ մշակութային կյանքում տեղի ունեցավ չափազանց կարևոր մի իրադարձություն՝ հայկական տպագրության սկզբնավորումը։ Ձեռագիր հայերեն գիրքը մինչև XIX դարը ներառյալ, շարունակել է իր զարգացումը և կատարել իր մշակութային դերը։ Սակայն XVI դարի երկրորդ տասնամյակից հայ գրքի պատմության մեջ սկսվում է նոր շրջան՝ տպագրության շրջանը։ Որքան էլ

---

[10] **Օ. Եգանյան, Ա. Ջեյթունյան, Փ. Անթաբյան,** *Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի*, հ. Ա, խմբ. ***Լ. Խաչիկյան, Ա. Մնացականյան***, Երևան, 1965 թ, էջ 195։

[11] **Գ. Տէր-Վարդանեան**, Մուտք, *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց*, հ. Է., խմբ. ***Գ. Տէր-Վարդանեան***, Երեւան, 2012, էջ 6։

ձեռագիր գիրքը շարունակեր իր գոյությունը, ինչպես էլ զարգանար, այնուամենայնիվ հետագայում՝ տպագրության շրջանում, այն աստիճանաբար իր տեղը պետք է զիջեր տպագիր գրքին: Առաջին հայ մարդը, որին հաջողվեց Եվրոպայում հիմնել տպարան և հրատարակել հայերեն գրքեր Ջուղայեցի (ենթադրաբար) Հակոբն էր, որն այժմ հայտնի է Հակոբ Մեղապարտ անունով[12]*: 1512 թ. սկսած, աշխարհի տարբեր ծագերում, որտեղ կային հայկական գաղթավայրեր, հիմնադրեցին հայկական տպարաններ, և լույս աշխարհ եկան հայերեն գրքեր: Այսպես՝ Վենետիկ (1512 թ.), Կ. Պոլիս (1567 թ.), Հռոմ (1579 թ.), Լվով (1616 թ.), Ամստերդամ (1660 թ.), Միլան (1681 թ.), Զմյուռնիա (1676 թ.), Լոնդոն (1736 թ.), Էջմիածին (1771 թ.), Մադրաս (1772 թ.), Պետերբուրգ (1781 թ.), Կալկաթա (1796 թ.), Նոր Նախիջևան (1790 թ.): Այնուհետև Փարիզում (1538 թ.), Պավիայում (1539 թ.), Յուրիխում (1555 թ.), Բեռլինում (1583 թ.), Քյոլնում (1587 թ.), Ֆրանկֆուրտում (1593 թ.), Պադուայում (1690 թ.) և այլուր տպագրվում էին այլալեզու գրքեր, որոնցում տեղ էին գտնում հայերեն այբուբեն կամ հայատառ հատվածներ: Վերը թվարկված գաղթավայրերի հայկական տպարաններում լույս տեսած հրատարակությունների մասն են կազմում պեղումների ընթացքում հայտնաբերված տպագիր պատառիկները:*

1. Կղեմես Գալանոս, Քերական և տրամաբանական ներածութիւն առ յիմաստութիւնն շահելոյ, Հռոմ, տպ. Ուրբանյան 1645 թ. (նկ. 4): 1627 թ. Ուրբանոս VII պապը Հռոմում հիմնում է հատուկ տպարան, որ հիմնադրի անունով հայ հեղինակները կոչում են նաև Ուրբանյան[13]*: XVII դարի ընթացքում այդ տպարանում լույս տեսան շուրջ 30 անուն հայերեն գրքեր՝ հիմնականում դավանաբանական բնույթի, նաև՝ բառարաններ ու հայոց լեզվի ձեռնարկներ՝ այլազգի քարոզիչներին հայոց լեզուն սովորեցնելու նպատակով: Այդ հրատարակություններից մեկն էլ «Քերական և տրամաբանական ներածութիւն» կոչվող գիրքն է, որի երեք էջերից է բաղկացած վերը նշված պատառիկը: Կղեմես Գալանոսը եղել է կաթոլիկ գործիչ, որը վարել է հայերին դավանափոխելու բացահայտ քաղաքականություն: Բացի կրոնական-դավանաբանական աշխատություններից, որոնց միջոցով նա աշխատում էր նպաստել Հայաստանում կաթոլիկության տարածմանը, Գալանոսը 1642 թ. գրել և 1645 թ. տպագրել է հայոց լեզվի վերը նշված քերականությունը՝ հայերեն ու լատիներեն զուգահեռ բացատրություններով, որտեղ քերականությանը հաջորդում է տրամաբանությունը*[14]*:*

---

[12] **Ռ. Իշխանյան,** *Հայ հնատիպ գիրքը*, Երևան, 1968, էջ 9-14:

[13] **Ռ. Իշխանյան,** *Հայ գրքի պատմություն*, հ. 1, *Հայ տպագիրը գիրքը 16-17-րդ դարերում*, Երևան 1977, էջ 327:

[14] **Գ. Ջանուկյան,** *Գրաբարի քերականության պատմություն (XVII-XIX դդ.)*, Երևան 1974, էջ 25:

2. Շարակնոց, Ամստերդամ, տպ. Սրբուհու Աստուածածնի, 1692 թ., Շարակնոց, Ամստերդամ 1698 թ. (նկ. 5)։ Շարակնոց, XVII դար։ Հատվածներ XVII դարի տարբեր Շարակնոցներից։

XVII-XVIII դդ. Արևմտյան Եվրոպայի հայկական տպարանների մեջ առանձնապես ուշագրավ է Հոլանդիայի մայրաքաղաք Ամստերդամի տպարանը։ Այստեղ է, որ հայ տպագրությունը, եթե ոչ իր ծագումը, ապա իր անդրանիկ փայլուն շրջանն է ունեցել. տպագրվել են այնպիսի գործեր, որոնք դեռ այսօր էլ կազմում են տպագրական արվեստի զարդը։ Ամստերդամում հայերեն գրքերի տպագրությունն սկսվելով 1660 թ., առժամանակյա դադարից հետո շարունակվում է մինչև 1716 թ., ամբողջ 57 տարի, ապա ավարտվում ընդմիշտ[15]։ Ամստերդամի հայկական տպարանի պատմության մեջ նշանակալի դեր են խաղացել Ոսկանյան և Վանանդեցիների տպարանները։ Դրանց զուգահեռ գործել է նաև «Սրբուհի Աստուածածին» կոչվող տպարանը, որի հրատարակություններից մեկն էլ վերը նշված Շարակնոցն է։ Այդ հրատարակությունը նույնությամբ կրկնում է Ոսկան Երևանցու 1664-1665 թթ. հրատարակած Շարակնոցը, թե՛ իր բովանդակությամբ և թե՛ պատկերազարդմամբ։ Մյուսը նույնպես 1698 թ. Ամստերդամում հրատարակած Շարակնոց է, սակայն բացակայում է տպարանի անվան հիշատակությունը։ Հայտնաբերվել են նաև XVII դարին վերագրվող Շարակնոցների պատառիկների տարբեր հատվածներ։ Դատելով այդ պատառիկների պատկերազարդումից՝ զարդագրերի, լուսանցազարդերի ձևավորումից, կարող ենք ենթադրել, որ դրանք եղել են կամ Ամստերդամի կամ Կոստանդնուպոլսի հրատարակություններ։

3. Զենոբ Գլակ, Հովհան Մամիկոնյան, Պատմութիւն Տարօնոյ, տպ. Գրիգոր Մարզվանեցի, Կ. Պոլիս 1719 թ.։ XVIII դ. սկզբի Կոստանդնուպոլսի հայկական տպագրության մեջ իր գործունեությամբ առանձնանում է Գրիգոր Մարզվանեցին։ Հիմնելով տպարան և աշխատեցնելով այն շուրջ չորս տասնամյակ, Գրիգոր Մարզվանեցին լույս է ընծայել 17 անուն գիրք, որոնք կարևոր են թե՛ իրենց բովանդակությամբ, թե՛ իրենց հարդարման բարձր արվեստով։ Դրանցից մի քանիսը տպագրական արվեստի իսկական գլուխգործոցներ են[16]։ Մարզվանեցու տպարանում է լույս տեսել նաև Զենոբ Գլակի «Պատմութիւն Տարօնոյ» աշխատությունը, որի երկու էջ հայտնաբերվել է պեղումներից։ Գիրքն ունի էջերի երկու համարակալում, 268 զարդափակ էջ։ Գտածոն պարունակում է «Կրթութիւն հաւատոյ»-ի (1713 թ.) տիտղոսաթերթը։ Գրքում կա Գրիգոր Լուսավորչին ներկայացնող մեկ փորագիր պատկեր, մեկ կիսախորան-գլխազարդ, մեկ լուսանցազարդ, վերջնազարդեր և զարդագրեր։

---

[15] **Ռ. Իշխանյան,** *Հայ տպագիր գիրքը 16-17-րդ դարերում*, էջ 408։

[16] **Ք. Կորկոտյան,** *Հայ տպագիր գիրքը Կոստանդնուպոլսում*, Երևան, 1964, էջ 34։

4. Վենետիկում գործող տպարանների շարքին է դասվում Ջուան-Բատիստա Բովիսի տպագրատունը, որը հայտնի է իր Ներսես Շնորհալու «Յիսուս որդի»-ի հրատարակությամբ՝ տպագրված 1660 թ. (նկ. 6)։ Գտածոների մեջ կա նաև այս հրատարակությունից պահպանված 28 էջ, որոնցից միայն մեկի վրա է պահպանվել բուսական լուսանցազարդ և զարդագիր։

Հայտնաբերվել են նաև XVII դարով թվագրվող Պատարագամատույցի մի հատված, և 1854 թ. Շուշիի՝ Մինաս Տառղլիճեանցի տպարանում լույս տեսած «Ժամագիրք Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ» գրքի տիտղոսաթերթի մի հատված։

Այժմ անդրադառնանք հայտնաբերված ձեռագիր պատառիկներին։

Ձեռագիր գտածոների շարքում առանձնանում են պարտամուրհակները (դրամական պարտքը վավերացնող փաստաթղթեր)՝ գրված նոտրգրով, թվագրվում են XVIII-XIX դարերով, միայն մեկն ունի հստակ թվագրում (1866 թ.) (նկ. 7)։ Այժմ թվարկենք մյուս ձեռագիր պատառիկները՝ իրենց թվագրումներով։

Կրոնական բնույթի վեց թղթե թերթ, բոլորգիր, որոնցից երեքը միևնույն ձեռագրի տարբեր թերթեր են։ Թվագրվում են XV-XVI դարերով (նկ. 8)։

Արաբատառ գրություն (նկ. 9)։

Մաթեմատիկական հաշվարկ, նոտրգիր XVIII դար (նկ. 9)։

Պատառիկների գրության ժամանակը ճշտելու ամենադյուրին ճանապարհը, անշուշտ, պահպանված գրերը թվակիր ձեռագրերի գրչության հետ համեմատելն է։ Մեր թվագրումը մոտավոր է և չի կարող զերծ լինել սխալներից, քանի որ այն հիմնված է զուտ հնագրական առանձնահատկությունների վրա, իսկ դրանք հաճախ խաբուսիկ են լինում։ Ձեռագիր պատառիկների գրատեսակները համեմատել ենք հնագրագիտական նորագույն ուսումնասիրության «Հայկական հնագրության ալբոմ»-ի[17] մեջ զետեղված թվակիր ձեռագրերի լուսանկարների և գրերի ժամանակագրական աղյուսակների հետ և արել ենք մոտավոր թվագրում։

Հնագիտական պեղումների արդյունքում հայտնաբերած այսօրինակ գտածոները հազվադեպ են, ըստ այդմ՝ ուշագրավ նյութ են ապագա ուսումնասիրողների համար։ 2019 թ. պատառիկները նվիրաբերվեցին Մաշտոցյան Մատենադարանին և գրանցվեցին Հայերէն պատառիկների հավաքածուի 2238 (ձեռագիր նյութերը), 2239 (տպագիր գքերի մասերը) և Արաբատառ պատառիկների հավաքածուի 614 համարների ներքո։

---

[17] **Մ. Սթոուն, Տ. Գույումճեան, Հ. Լեմման**, *Հայկական հնագրութեան ալբոմ*, անգլերենից թարգմանեցին *Գոհար Մուրադեանը և Արամ Թոփչեանը*, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2006։

ARMAN NALBANDYAN, ARPINE SIMONYAN

NEW FRAGMENTS FROM THE EXCAVATIONS OF ST. HOVHANNES MONASTERY IN MEGHRI

Keywords: Meghri, St. Hovhannes monastery, cache, excavations, icon, printed books, manuscripts, fragments.

In 2016 and 2018 the expedition of the Institute of Archaeology and Ethnography excavated the St. Hovhannes monastery Meghri. As a result, many valuable items of medieval culture have been discovered. The excavation of the cave uncovered under the southern sacristy of the church was very important. Here among many findings were a piece of icon on canvas as well as remarkable fragments of XV-XIX cc. manuscripts and XVII-XVIII cc. printed books.

АРМАН НАЛБАНДЯН, АРПИНЕ СИМОНЯН

НОВОНАЙДЕННЫЕ ФРАГМЕНТЫ ИЗ РАСКОПОК МОНАСТЫРЯ СВ. ОВАНЕСА (ИОАННА) В МЕГРИ

Ключевые слова: Монастырь Св. Ованеса (Иоанна), Мегри, тайник, раскопки, икона, печатные книги, рукописи, фрагменты.

В 2016 и 2018 г. экспедиция Института археологии и этнографии провела раскопки на территории монастыря св. Ованеса города Мегри. В результате работ были обнаружены многочисленные предметы материальной культуры средневековой Армении. Особенно важны раскопки тайника, обнаруженного под южной ризницей церкви. Среди находок следует отметить фрагмент иконы, а также фрагменты рукописей XV-XIX вв. и старопечатных книг XVII-XVIII вв., в которых доминируют религиозные тексты.